ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝
Աննա Մելքոնյան, Մակրոտնտեսական քաղաքականության վարչության մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ Ավստրիա Հանրապետություն, ք. Վիեննա, 2025 թվականի մայիսի 5-ից մայիսի 16-ը ներառյալ:

3. Հրավիրող կողմը՝ Արժույթի միջազգային հիմնադրամ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Գործուղման նպատակն էր մասնակցել «Մակրոտնտեսական վերլուծություն և կառավարում» դասընթացին, որի ընթացքում ներկայացվել են տնտեսության հատվածների ախտորոշման մեթոդաբանական հիմքերը, ազդակ-արձագանք ֆունկցիաների կիրառմամբ տնտեսության փոխանցումային մեխանիզմների մեկնաբանությունը: Դասընթացը ուղղված էր նաև տարբեր մակրոտնտեսական քաղաքականությունների արդյունավետության գնահատմանը, դրանց գործիքների ուսումնասիրմանը և դրանց միջոցով մակրոտնտնտեսական կայունության ձեռքբերման ուղիների վերլուծությանը, ինչպես նաև ծանոթացում տնտեսության խոցելիությունների ախտորոշման գործընթացին (այս հատվածը մասնակի է ներկայացվել): Դասընթացը ուղեկցվել է կոնկրետ երկրի օրինակով վերլուծությունների և կանխատեսումների իրականացմամբ:

Ընդհանուր առմամբ, դասընթացը համապարփակ կերպով ամփոփել է մակրոտնտեսական կայունության գնահատման մեթոդական մոտեցումները և գործիքակազմը, տնտեսության ախտորոշման տեսական և էմպիրիկ մանրամասները:

5. Քննարկված թեմաները՝

1. Բիզնես ցիկլեր և մակրոտնտեսական ախտորոշում,
2. Մակրոտնտեսական կայունացնող քաղաքականություններ,
3. Կառուցվածքային բարեփոխումներ,
4. Դրամավարկային քաղաքականություն և արժույթի փոխարժեքի ռեժիմներ,
5. Փոխանցումային մեխանիզմները այլընտրանքային արժույթի փոխարժեքի ռեժիմների դեպքում,
6. Թուրքիայի տնտեսության բնութագիր,
7. Առաջարկի, պահանջարկի և աճի ախտորոշում,
8. Արժույթի իրական փոխարժեք, գնային մրցունակություն և վճարային հաշվեկշռի վերլուծություն,
9. Կապիտալ հոսքերի կառավարում,

10. Հարկաբյուջետային քաղաքականության վերլուծություն և հարկաբյուջետային շրջանակ,
11. Հարկաբյուջետային դիմակայունություն,
12. Ինֆլյացիա և դրամավարկային քաղաքականություն,
13. Համապարփակ ադապտիվ սպասումների մոդելի (CAEM) և եռամսյակային կանխատեսման մոդելի (QPM) համեմատություն:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Դասընթացով նախատեսված դասախոսություններն ուղեկցվել են գործնական սեմինարներով՝ մշակված գործիքակազմով ներկայացված տեսական գիտելիքները գործնականում կիրառելու նպատակով: Յուրաքանչյուր գործնական աշխատանք ամփոփվում էր ստացված արդյունքների քննարկմամբ: Մասնավորապես, որպես դասընթացի ամփոփում, ներկայացվել է շնորհանդես՝ Թուրքիայի Հանրապետության տնտեսության դինամիկայի այլընտրանքային սցենարով ազդակ-արձագանք ֆունկցիայի միջոցով: Կիրառելով ներկայացված գործիքակազմը՝ բացահայտվել է տնտեսության ախտորոշում, կուտակված ռիսկերը և ներկայացվել են քաղաքանությունների մշակման առաջարկներ:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Այդպիսիք առկա չեն:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այդպիսիք առկա չեն:

9. Ստորագրությունը, ամսաթիվը:

21 մայիս, 2025թ.